ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ապրիլի 2022 թվականի №-Ա
քաղ. Երևան

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱԼԻՈՒԵԶԱ ՖԵԼԱՀԱԹՓԻՇԵՀԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2022 թվականի մարտի 14-ի №07/11.1/1633-2022 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում հայտնաբերվել է 890.0-902.5ՄՀց հաճախականային տիրույթում ճառագայթող բջջային կապի վերահաղորդակ, որը տեղակայված է Երևան քաղաքի Կորյունի փողոցի №5 հասցեում գտնվող «Բահուս» հյուրանոցի շենքի տանիքում (գործունեություն իրականացնող անձ՝ անհատ ձեռնարկատեր Ալիռեզա Ֆելահաթփիշեհ),

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ անհատ ձեռնարկատեր Ալիռեզա Ֆելահաթփիշեհին ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի մարտի 15-ի №ԱՆ/34.2-Մ2-9/814-2022 գրությունը, որին ի պատասխան որևէ փաստարկ չի ներկայացվել,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ փաստվել է անհատ ձեռնարկատեր Ալիռեզա Ֆելահաթփիշեհի կողմից առանց թույլտվության 890.0-902.5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Անհատ ձեռնարկատեր Ալիռեզա Ֆելահաթփիշեհին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 890.0-902.5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ալիռեզա Ֆելահաթփիշեհին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------2022թ.